ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/88

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

Լ. Ղալակչյանի (լիազորագիր տրված՝ 28.04.2020թ.),

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն

Է. Փոթոյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1085248)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.04.2020թ. թիվ 26/26-1/5791-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 15.04.2020թ. թիվ 07-187 գրության հիման վրա, 20.04.2020թ. թիվ 26/26-1/5791-2020 գրությամբ նախաձեռնել է «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված թիվ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգին, որի արդյունքում 3 չափաբաժնով, այդ թվում նաև՝ թիվ 92 չափաբաժնով, որը հանդիսանում է ախտահանիչ միջոց (քլորհեքսիդին սպիրտային լուծույթ 0.5%, 5լ) կնքվել է ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1 ծածկագրով պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Պայմանագիրը կնքվել է 2020 թվականի մարտի 3-ին, սակայն Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2020 թվականի մարտի 20-ին կնքված համաձայնագրով՝ ֆինանսական միջոցների հատկացումից հետո:

Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, մատակարարման վեջնաժամկետ է սահմանված տվյալ տարվա (2020թ.) դեկտեմբերի 25-ը, իսկ համաձայնագրով այլ ժամկետ սահմանված չէ:

Ընկերությունը հայտնել է, որ Պայմանագրում ներառված թիվ 92-րդ չափաբաժնի մատակարարումը Պատվիրատուին մինչ այժմ չի կատարվել Ընկերության կամքից և ցանկությունից անկախ՝ պայմանավորված ֆորս-մաժորային իրավիճակով՝ կապված նոր կորոնավիրուսի համաճարակի հետ, որի մասին Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է:

Ընկերությունը հայտնել է, որ տվյալ ապրանքը պետք է ներկրվեր արտերկրից՝ Ռուսաստանից: Սակայն 2020 թվականի մարտի 3-ին Ընկերությունը Ռուսաստանի մատակարարներից ստացել է նամակ, որ մարտի 2-ին Ռուսաստանի Դաշնության կառավարությունը թիվ 223 որոշումով արգելել է ախտահանիչ միջոցների, նյութերի և ոչ միայն, արտահանումը Ռուսաստանից, այդ թվում նաև՝ դեպի մաքսային միության անդամ երկրներ:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված որոշումը Ընկերությունը մատակարարից ստանալուն պես դրա մասին անմիջապես տեղեկացրել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով քայլեր ձեռնարկել հարցը կարգավորելու համար, քանի որ

հարցը ընդհանուր էր ամբողջ պետության համար:

Ընկերությունը հայտնել է, որ հաջորդ օրը ՀՀ առողջապահության նախարարի տեղակալի կողմից կազմակերպվել է քննարկում սույն հարցի շուրջ, որին մասնակցում էր նաև «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն: Քննարկման ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց այդ մասին տեղեկացնել բոլոր բուժհաստատություններին:

Ընկերությունը հայտնել է, որ ներկայիս իրավիճակում, երբ բոլոր պետություններում գործում են սահմանափակումներ, կազմակերպությունները և արտադրողները չեն աշխատում, օդային բեռնափոխադրումը ամբողջովին դադարեցված է, նույնիսկ ծովային փոխադրումներն են դադարեցված, Պատվիրատուն չի տեսնում ոչ մի ֆորս-մաժորային իրավիճակ և պահանջում է խզել պայմանագիրը մի ապրանքի մասով, որի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն հնարավոր չէ, արգելված է արտահանող երկրի կառավարության կողմից մինչև սույն թվականի հունիսի 1-ը:

Ընկերությունը հայտնել է, որ ներկայիս իրավիճակով պայմանավորված ուղղակի անհնար է պլանավորել բոլոր մատակարարումները անթերի և պատվերը ստանալուց հետո սեղմ ժամկետում կատարել բոլոր ապրանքների մատակարարումը:

Այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված մինչև 2020թ-ի դեկտեմբերի 25-ը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն պայմանագիրը խզել է 2.1.7.1 կետի բ) ենթակետի ուժով, ինչը երևում է պատվիրատուի գրության համալիր վերլուծությունից, մինչդեռ 2.1.7.1 կետի բ) ենթակետով սահմանված խախտումը արձանագրելու համար, անհրաժեշտ է այդ ժամկետի (25.12.2020) սպառված լինելու հանգամանքի առկայությունը:

Կողմերի միջև կնքված թիվ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1 պայմանագրի 7-րդ կետով նշվում է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Նաև նշվում է, որ այդպիսի իրավիճակներ են՝ արտակարգ դրություն հայտարարելը, գործադուլները, հաղորդակցության միջոցների, աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Ընկերությունը խնդել է, հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը և բերված մեկնաբանությունները, չներառել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/88 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.04.2020թ. թիվ 07-187 գրությամբ հայտնել է, 03.03.2020թ. թիվ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր է կնքվել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ: Համաձայն նշված պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (հետայսու նաև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էական խախտել է Պայմանագիրը:

Պատվիրատուն հայտնել է, որ էլ. փոստի և հեռախոսային կապի միջոցով բազմիցս ապրանքի մատակարարման պատվեր է արվել 92-րդ չափաբաժնի՝ քլորհեքսիդին սպիրտային լ.թ. 0,5%-5լ համար, որը սակայն մնացել է անպատասխան:

Պատվիրատուն հայտնել է, որ մատակարար Ընկերության կողմից խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ծանուցվել է «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին, որ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծվում է 92-րդ չափաբաժնի համար՝ ապրանքը չմատակարարելու պատճառով:

Պատվիրատուն նշել է, որ ինչ վերաբերում է «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի «անհաղթահարելի ուժի ազդեցությունը» ֆորսմաժորային իրավիճակին հղում կատարելու հանգամանքին, ապա դա որևէ հիմնավորում չունի հետևյալ պատճառաբանությամբ՝ Ընկերությանը անհրաժեշտ է ախտահանիչ նյութ, որի մատակարարումն ստանձնած «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել:

Պատվիրատուն հայտնել է, որ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հրաժարվում է շարունակել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ համագործակցությունը: Պայմանագիրը 2.1.7 կետի համաձայն՝ 92-րդ չափաբաժնի մասով, լուծել է Պայմանագիրը, միաժամանակ կիրառել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն խնդրել է, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, ինչպես նաև պարտադրել վերջինիս վճարել օրենքով սահմանված տույժը և տուգանքները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/88 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն

հետևյալ փաստերը.

1. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 03.03.2020թ. կնքվել է ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ 20/7-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 92-րդ չափաբաժնի համար՝ 40 հատ քլորհեքսիդին սպիրտային լ.թ. 0,5%-5լ, ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել՝ այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո 1-ին փուլի համար (եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ):

3. Հավելված 1-ով սահմանվել է, որ մատակարարման ենթակա քանակը կմատակարարվի ըստ պատվիրատուի պահանջի:

4. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 20.03.2020թ. կնքվել է N 42 համաձայնագիրը:

5. «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 14.04.2020թ. թիվ 07-186 գրությամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 03.03.2020թ. կնքված ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1 ծածկագրով պայմանագրի կատարման ընթացքում 92-րդ չափաբաժնի մասով ապրանքի պատվեր է արվել՝ քլորհեքսիդին սպիրտային լ.թ. 0,5%-5լ-ի համար, որը սակայն մնացել է անպատասխան: Հետևաբար, Ընկերության կողմից խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը, ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով 2.1.7-րդ կետը՝ 92-րդ չափաբաժնի մասով Պայմանագիրը համարում է լուծված:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 14.04.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2020թ. թիվ 26/26-1/5791-2020 գրությունը, «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 15.04.2020թ. թիվ 07-187 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 03.03.2020թ. կնքվել է ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ 20/7-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 92-րդ չափաբաժնի համար՝ 40 հատ քլորհեքսիդին սպիրտային լ.թ. 0,5%-5լ, ***ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել՝*** այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան ***համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո 1-ին փուլի համար*** (եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ):

Հավելված 1-ով սահմանվել է, որ ***մատակարարման ենթակա քանակը կմատակարարվի ըստ պատվիրատուի պահանջի:***

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 20.03.2020թ. կնքվել է N 42 համաձայնագիրը:

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 14.04.2020թ. թիվ 07-186 գրությամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 03.03.2020թ. կնքված ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1 ծածկագրով պայմանագրի կատարման ընթացքում 92-րդ չափաբաժնի մասով ապրանքի պատվեր է արվել՝ քլորհեքսիդին սպիրտային լ.թ. 0,5%-5լ-ի համար, որը սակայն մնացել է

անպատասխան: Հետևաբար Ընկերության կողմից խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով 2.1.7-րդ կետը, 92-րդ չափաբաժնի մասով Պայմանագիրը համարում է լուծված:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 14.04.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***5 օրացուցային օրից ավելի:***

Պայմանագրի N 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետը՝ 92-րդ չափաբաժնի մասով, նախատեսվել է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան ***համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո 1-ին փուլի համար՝ ըստ պատվիրատուի պահանջի:***

Ընդ որում՝ Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև N 42 համաձայնագիրը կնքվել է ***20.03.2020թ.-ին***, ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, քանի որ N 42 համաձայնագիրը կնքվել է ***20.03.2020թ.-ին***, ապա Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը՝ 1-ին փուլի համար՝ ըստ Պատվիրատուի պահանջի կարող էր վրա հասնել միայն 08.04.2020 թվականից հետո, սակայն Պատվիրատուն 92-րդ

չափաբաժնի մասով՝ 20 հատ քլորհեքսիդին սպիրտային լ.թ. 0,5%-5լ ապրանքատեսակի պատվեր է արել 02.04.2020թ. և ապրանքի մատակարարման ժամկետի խախտում արձանագրելով՝ լուծել Պայմանագիրը:

Մինչդեռ արձանագրում եմ, որ ապրանքի մատակարարման ժամկետի խախտման փաստը կարող էր վրա հասնել միայն 08.04.2020 թվականից հետո Պատվիրատուի կողմից պատվեր կատարելու և պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված 5 օրացուցային օրից ավելի խախտման դեպքում: Հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի խախտման փաստը, քանի որ Պայմանագրի համաձայն՝ ապրանքի մատակարարման 1-ին փուլի ժամկետը՝ ըստ Պատվիրատուի պահանջի, ըստ էության նախատեսված է եղել 08.04.2020 թվականից հետո, մինչդեռ Պատվիրատուի կողմից պատվեր է կատարվել 02.04.2020թ., իսկ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտման փաստը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.04.2020թ. թիվ 26/26-1/5791-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ